ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(Փետրվար 2002)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի
«ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի
«Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է
մակրոտնտեսական, հարկաբյուջետային, դրամավարկային,
ինչպես նաև ՀՀ վճարահաշվարկային, բանկային համակարգի
հիմնական ցուցանիշների և տնտեսական նորմատիվների
վերաբերյալ տեղեկատվություն:
Մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ
տեղեկատվության աղբյուրը
ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է,
իսկ հարկաբյուջետային, դրամավարկային և բանկային
վիճակագրության տվյալների աղբյուրը՝
ՀՀ կենտրոնական բանկը:
Դրամավարկային և բանկային վիճակագրությունում ընդգրկված է
ՀՀ միջազգային պահուստների, դրամական ագրեգատների,
ֆինանսական շուկայի և փոխարժեքների վերաբերյալ
տեղեկատվություն:

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումներ
տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է.

http:// www.CBA.am

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ*

Տնտեսական աճ: 2002 թ. հունվար-փետրվարին տնտեսական աճը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, կազմել է 5.5 %: ՀՆԱ աճը պայմանավորվել է հիմնականում արդյունաբերության (ազդեցությունը ՀՆԱ աճի վրա կազմել է 2.2 տոկոսային կետ) և ծառայությունների (2.1) աճով: ՀՆԱ դեֆլյատորը 2002 թ. հունվար-փետրվարին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, կազմել է 100.8 %:

Սղաճ: Համաձայն ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ 2002 թ. փետրվարին գրանցվել է սպառողական գների ընդհանուր մակարդակի 0.7 %-ով անկում՝ պայմանավորված հիմնականում «Բանջարեղեն և կարտոֆիլ», «Մսամթերք» և «Ծխախոտ» պարենային առանձին ապրանքախմբերի գների անկմամբ: 2001 թ. դեկտեմբերի համեմատ սղաճը կազմել է 1.5 %: Ընդ որում, բնականոն սղաճը կազմել է -0.4 %, սեզոնային ապրանքների գներն աճել են 17.8 %-ով, պետության կողմից կարգավորվող ծառայությունների սակագները՝ ընդամենը 0.2 %-ով՝ պայմանավորված հիմնականում «Փոստային առաքում» ծառայության սակագնի 30.6 % աճով: Արդյունքում, սեզոնային ապրանքների գների փոփոխությունն ապահովել է սղաճի 1.82 տոկոսային կետը, պետության կողմից կարգավորվող ծառայությունների սակագների փոփոխությունը՝ 0.01 տոկոսային կետը, իսկ բնականոն սղաճը՝ -0.36 տոկոսային կետը: Վերջինիս բացասական մակարդակը պայմանավորված է այն հանգամանքով, որ «Ծխախոտ» ապրանքախումբը, որն ապահովել է փետրվար ամսվա գների անկման զգալի մասը, ընդգրկված է բնականոն սղաճի հաշվարկում:

2002 թ. հունվար-փետրվարին, 2001 թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ, սպառողական գների ինդեքսը կազմել է 100.6 %, իսկ փետրվարին, նախորդ տարվա նույն ամսվա համեմատությամբ՝ 100.7 %:

Արտաքին հատված: 2002 թ. հունվար-փետրվար ամիսներին ապրանքների արտահանումը կազմել է 77.0 մլն ԱՄՆ դոլար (FOB գներով)՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ աճելով 72.0%-ով: Արտահանման աճը պայմանավորվել է հիմնականում «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի արտահանման ծավալների գծով՝ շուրջ 2.5 անգամ, «Պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբի արտահանման գծով՝ 79.3% և «Մանածագործական արտադրանք» ապրանքախմբի արտահանման գծով՝ մոտ 2.2 անգամ աճով:

Ներմուծումը կազմել է 132.6 մլն ԱՄՆ դոլար (CIF գներով)՝ նախորդ տարվա նույն ամսվա համապատասխան ցուցանիշի համեմատությամբ աճելով 16.5 %-ով: Հաշվետու ժամանակահատվածում ներմուծման աճը նկատվել է «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» (73.2%-ով), «Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» (63.6%-ով) ապրանքախմբերի ներմուծման ծավալների գծով:

Արդյունքում, 2002 թ. հունվար-փետրվարին առևտրային հաշվեկշռի պակասուրդը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, կրճատվել է 19.5 %-ով և կազմել 55.6 մլն ԱՄՆ դոլար:

2001 թ. հունվար-փետրվար ամիսներին ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին անվանական հաշվարկային փոխարժեքը կազմել է 564.68 դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ արժեզրկվելով 2.2 %-ով: Նախորդ ամսվա համեմատությամբ փոխարժեքն արժեզրկվել է 0.2 %-ով:

Պետբյուջեի ցուցանիշներ: Պետական բյուջեի եկամուտներն ու դրամաշնորհները փետրվարին կազմել են 15.1 մլրդ դրամ՝ ծրագրված 15.9 մլրդ դրամի փոխարեն, իսկ հարկային եկամուտները՝ 12.1 մլրդ դրամ՝ ծրագրված 13.0 մլրդ դրամի փոխարեն: Միջին օրական հարկային եկամուտները կազմել են 607.6 մլն դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 596 մլն դրամի դիմաց: Հատկանշական է, որ փետրվարին ևս հարկերի հավաքագրման գործընթացը բնորոշվել է խիստ անհամաչափությամբ. ամսվա վերջին օրը հավաքագրված հարկերը կազմել են ամսվա ցուցանիշի 37 %-ը՝ հունվարի 45 %-ի դիմաց:

Ծախսերը կազմել են 18.9 մլրդ դրամ՝ ծրագրով նախատեսված 22.5 մլրդ դրամի փոխարեն: Արդյունքում, բյուջեի պակասուրդը կազմել է 3.8 մլրդ դրամ՝ ծրագրված 6.6 մլրդ դրամ պակասուրդի փոխարեն: Այն ֆինանսավորվել է հետևյալ աղբյուրների՝ արժեթղթերի տեղաբաշխումից ստացված 0.7 մլրդ դրամ զուտ մուտքերի, -3.4 մլրդ դրամ արտաքին ֆինանսավորման (արտաքին պարտքի վճարում) և միասնական հաշվում կուտակված միջոցներից 6.5 մլրդ դրամ ծախսման հաշվին: Պակասուրդի վերը նշված թերֆինանսավորումը պայմանավորված էր ՀՀ գանձապետարանի միասնական հաշվում կուտակված միջոցներից՝ ծրագրված 9.8 մլրդ դրամի փոխարեն 6.5 մլրդ դրամի ծախսմամբ:

ՀՀ ԿԲ նկատմամբ ՀՀ կառավարության զուտ պարտավորություններն ամսվա ընթացքում աճել են 5.9 մլրդ դրամով և կազմել 0.6 մլրդ դրամ:

---

* *Ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության նախնական տվյալների:*

Դրամավարկային քաղաքականություն: Փետրվարի դրամավարկային քաղաքականության սցենարը ծրագրվել էր հունվար ամսվա փաստացի արդյունքների հիման վրա: Ակնկալվում էր, որ հունվարի վերջին օրը հավաքագրված մեծածավալ հարկային եկամուտները և ԿԲՎ IV-ի հերթական մասնաբաժինը, որոնք կուտակվել էին միասնական հաշվում, փետրվարին կծախսվեն: Ներարկման ուղղությամբ որպես ավտոնոմ հոսք էր դիտարկվում նաև Լինսի հիմնադրամի դրամաշնորհի ամսվա չափաբաժինը, ինչպես նաև ամսվա ընթացքում մարվելու էին նախկինում բանկերից ներգրավված ավանդները: Հաշորագումարում, փետրվարին փողի բազայի աճը, ի հաշիվ ավտոնոմ հոսքերի, պետք է կազմեր ավելի քան 12.6 մլրդ դրամ, մինչդեռ, ըստ առաջին եռամսյակի ծրագրի ամսական բաշխվածության, ամսվա համար ծրագրված փողի բազայի տատանումների թույլատրելի միջակայքի վերին սահմանը շուրջ 75.0 մլրդ դրամ էր, ինչը ենթադրում էր փողի բազայի առավելագույնը 3.2 մլրդ դրամի աճ:

Փաստացի արդյունքներով դրամավարկային քաղաքականությունը մինչև ամսվա վերջին օրն ընթացել է նախանշված սցենարով: Փողի բազան առաջին տասնօրյակում աստիճանաբար աճել է՝ հասնելով տատանումների թույլատրելի միջակայքի միջնակետին, այնուհետև տատանվել վերին սահմանին մոտ՝ գերազանցելով միջակայքի վերին սահմանը ավելի քան 800 մլն դրամով: Փողի բազայի նման վարքագծի դրսևորմանը էապես նպաստել է Կառավարության միասնական հաշվի մնացորդից ավելի քան 9.0 մլրդ դրամի ծախսերի իրականացումը, որից ԿԲ-ն արտարժույթի վաճառքի միջոցով ստերիլիզացրել է մոտ 5.0 մլրդ դրամը: Վերջինիս ծավալները նախատեսվածից 1.5 մլրդ դրամով ցածր են եղել՝ պայմանավորված ամսվա ընթացքում Լինսի հիմնադրամի դրամաշնորհի ակնկալվող գումարի միայն 20 %-ի ստացմամբ:

Ամսվա վերջի դրությամբ շեղումներ արձանագրվել են հիմնականում ԿԲ ՋՆԱ-ի կառուցվածքային շարժերի հետևանքով, ընդ որում, դրա գերակշիռ մասը բաժին է ընկել վերջին օրվան: Նախ, այդ օրը հավաքագրված հարկային եկամուտները կազմել են ավելի քան 3.0 մլրդ դրամ, որն ամբողջությամբ կուտակվել է միասնական հաշվում՝ նույնչափով նվազեցնելով ԿԲ հանդեպ Կառավարության պարտավորությունները: Միևնույն ժամանակ, վերջին օրը «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի պահանջներից ելնելով, երկու բանկի միավորման արդյունքում, նրանց ֆինանսական վիճակի բարելավման նպատակով, տրամադրվել է շուրջ 800 մլն դրամի համակարգային վարկ:

Արդյունքում, փետրվարի 28-ին դիտվել է փողի բազայի կտրուկ նվազում, սակայն հունվարի 31-ի համեմատությամբ այն աճել է 1.0 մլրդ դրամով և կազմել 72.8 մլրդ դրամ՝ բարձր գտնվելով տատանումների թույլատրելի միջակայքի ստորին սահմանից ավելի քան 700 մլն դրամով:

Նշենք, որ փողի բազայի ընդլայնումն ամսվա ընթացքում ուղեկցվել է ԿԲ-ից դուրս կանխիկի աճով՝ 2.2 մլրդ դրամ, որն ամբողջությամբ բաժին է ընկել առաջին տասնօրյակին: Մինչև վերջին օրվա մեծածավալ նվազումը աճել են նաև թղթակցային հաշվի միջոցները, ինչով էլ կարելի է բացատրել բանկային համակարգում իրացվելիության ավելցուկի բարձր մակարդակի պահպանումը՝ միջին օրական շուրջ 2.0 մլրդ դրամ: Դրանով պայմանավորված՝ բանկերը, պետարժեթղթերի առաջարկվող սահմանափակ ծավալների պայմաններում (պահանջարկը մշտապես գերազանցել է առաջարկը 2.5-3 անգամ), դիմել են ԿԲ-ում միջոցների ավանդադրման մշտական հնարավորության գործիքին, որի միջին մնացորդը փետրվարին կազմել է 1.4 մլրդ դրամ:

Հունվարի խոշորածավալ նվազումից հետո փետրվարին դրամային զանգվածը (առանց կուտակված տոկոսների) որոշ չափով վերականգնվել է՝ աճելով մոտ 2.5 մլրդ դրամով, որը հիմնական մասով բաժին է ընկել շրջանառության մեջ գտնվող կանխիկ դրամին: Ի տարբերություն դրամայինի՝ փողի զանգվածը ևս փետրվարին նվազել է ավելի քան 1.4 մլրդ դրամով, ինչը պայմանավորվել է բացառապես արտարժութային ավանդների կրճատմամբ: Ընդ որում, արտարժութային ավանդների կառուցվածքում նվազման գերակշիռ մասը գրանցվել է ցպահանջի գծով:

Համեմատության համար նշենք, որ եռամսյակի անցած երկու ամիսների արդյունքներով փողի զանգվածը ցածր է եռամսյակի ծրագրային ցուցանիշից ավելի քան 10.4 մլրդ դրամով, իսկ դրամային զանգվածը գրեթե համընկնում է ծրագրված միջին եռամսյակային ցուցանիշին:

Ի տարբերություն հունվարի՝ փետրվարին դիտվել է փողի բազմարկչի մակարդակի անկում՝ պայմանավորված կանխիկի աճով և ավելցուկ պաշարների բարձր մակարդակով: Ժամանակաշրջանի վերջի դրությամբ փողի բազմարկիչը կազմել է 2.2՝ նախորդ ամսվա 2.25-ի դիմաց: Ինչ վերաբերում է դրամային բազմարկչին, ապա այն ամսվա ընթացքում աճել է 1.07-ից մինչև 1.09-ի, որը կարելի է բացատրել փողի բազայի համեմատ դրամային զանգվածի առաջանցիկ աճով:

Ֆինանսական շուկայում փետրվարին ևս շարունակվել են տոկոսադրույքների նվազման միտումները: Մասնավորապես, պետարժեթղթերի միջին կշռված եկամտաբերությունը նվազել է 0.5 տոկոսային կետով, իսկ բանկային տոկոսի հաշվարկային դրույքը, որը տնտեսությունից ներգրավված և տեղաբաշխված տոկոսադրույքների միջին կշռված մեծությունն է, նվազել է 1 տոկոսային կետով: Վերոնշյալ միտումներին համապատասխան, նաև հաշվի առնելով իրացվելիության ավելցուկի առկա բարձր մակարդակը՝ Կենտրոնական բանկի խորհուրդը վերանայել է ԿԲ գործառնությունների տոկոսադրույքները՝ ռեպո համաձայնագրերի և արժեթղթերի առքուվաճառքի տոկոսադրույքներն իջեցնելով 0.5, իսկ լոմբարդային վարկի և ավանդի տոկոսադրույքը՝ 2 տոկոսային կետով:

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

(ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա)

I. Իրական հատված

Անվանում	*Հունվար*	*2002 թ. հունվարի իրական աճի ինդեքսը 2001 թ. հունվարի նկատմամբ (%)*	*Հունվար-փետրվար*[1]	*2002 թ. հունվար-փետրվարի իրական աճի ինդեքսը 2001 թ. հունվար-փետրվարի նկատմամբ (%)*[1]
Համախառն ներքին արդյունք *(մլն դրամ)*	44982.9	107.5	100429.9	105.5
ՀՆԱ դեֆլյատոր *(%, աճողական)*	101.3	-	100.8	-
Մեկ զբաղվածին բաժին ընկնող ՀՆԱ *(հազար դրամ, աճողական)*[2]	35.2	107.6	-	-
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն դրամ)*	23716.0	107.1	47836.8	107.6
Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կվտ/ժամ)*	619.9	99.7	1125.6	96.3
Գյուղատնտեսության համախառն արտադրանք *(մլն դրամ)*	11071.0	105.8	19208.6	104.5
Մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը *(մլն դրամ)*	32267.4	108.6	64220.7	108.6
Կապիտալ շինարարության ծավալը *(մլն դրամ)*	1897.5	104.6	5802.2	112.3
Բնակչության դրամական եկամուտները *(մլն դրամ)*	43761.6	105.5[2]	89004.8	100.9[2]
Բնակչության դրամական ծախսերը *(մլն դրամ)*	52430.8	99.0[2]	95346.4	96.6[2]
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը *(դրամ)*	23565	108.2[2]	23607	108.2[2]
Տնտեսապես ակտիվ բնակչություն *(հազար մարդ)*	1417.2	-	1416.8	-
Պաշտոնապես գրանցված գործազուրկներ *(հազար մարդ)*	138.0	-	137.6	-
Գործազրկության մակարդակը (%)	9.7	-	9.7	-

II. Արտաքին հատված

Անվանում	*Հունվար*	*2002 թ. հունվարը 2001 թ. հունվարի նկատմամբ (%)*	*Հունվար-փետրվար*[1]	*2002 թ. հունվար-փետրվարը 2001 թ. հունվար-փետրվարի նկատմամբ (%)*[1]
Արտահանում *(FOB, մլն ԱՄՆ դոլար)*	33.7	155.0	77.0	172.0
Ներմուծում *(CIF, մլն ԱՄՆ դոլար)*	64.0	123.2	132.6	116.5
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ *(մլն ԱՄՆ դոլար)*	30.3	100.3	55.6	80.5

III. Գների ինդեքսներ

Ժամանակաշրջան	*Սպառողական գների ինդեքս*	*Արդյունաբերական արտադրանքի գների ինդեքս*	*Գների ինդեքս կապիտալ շինարարությունում*	*Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս*
նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	102.2	102.9	101.0	101.8
Փետրվար	99.3	100.8	99.8	95.8
2002 թ. հունվար-փետրվարը 2001 թ. հունվար-փետրվարի համեմատությամբ	100.6	101.0	106.8	99.3

IV. Սղաճ

ժամանակաշրջան	*2000*	*2001*	*2002*	*2002*
	նախորդ ամսվա նկատմամբ (%)			*նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ (%)*
Հունվար	1.9	4.6	2.2	2.2
Փետրվար	0.1	-0.9	-0.7	1.5
Մարտ	-0.4	0.0		
Ապրիլ	-0.8	-0.1		
Մայիս	-0.3	1.6		
Հունիս	-0.3	-1.3		
Հուլիս	-2.0	-2.7		
Օգոստոս	-1.3	-0.7		
Սեպտեմբեր	0.3	-1.2		
Հոկտեմբեր	0.0	0.1		
Նոյեմբեր	0.9	1.2		
Դեկտեմբեր	2.4	2.4		
Տարեկան *(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)*	0.4	2.9		
Տարեկան *(նախորդ տարվա նկատմամբ)*	-0.8	3.1		

[1] *Ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության նախնական տվյալների:*
[2] *ՀՀ ԿԲ հաշվարկներով:*

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ[1]


(մլն դրամ)

Ժամանակաշրջան	Պահանջներ կառավարության նկատմամբ				Կառավարության ավանդներ						Զուտ պահանջներ կառավարության նկատմամբ[2] փոփոխությունը	Զուտ պահանջներ կառավարության նկատմամբ[3] մնացորդը
	տրամաբանական կարճաժամկետ պետական արժեթղթերի տեսակներով	պետական արժեթղթերի կարգավիճակի տեսակներով	տեսակ. տարբերակի պետական պարտատոմսեր	ընդամենը	հանրապետական բյուջեի միջոցներ դրամով	հանրապետական բյուջեի միջոցներ արտարժույթով	ՀԲԿԳ-երի միջոցներ դրամով	ՀԲԿԳ-երի միջոցներ արտարժույթով	ՀՀ տրցուտ. պետ. հիմնադրամի միջոցներ	ընդամենը		
2001												
Հունվար	1446	8534	-68	9911	3258	157	18	1000	144	4577	5334	***5686***
Փետրվար	1295	8208	-49	9454	4756	175	22	1230	0	6184	3270	***3380***
Մարտ	1021	8740	-54	9707	3156	148	20	1176	6	4506	5201	***5406***
Ապրիլ	822	9011	-38	9795	1376	175	5	1058	30	2644	7151	***7520***
Մայիս	811	8478	-23	9265	1882	179	14	882	5	2962	6303	***6434***
Հունիս	454	8369	-10	8814	2090	246	11	711	1	3058	5756	***5966***
Հուլիս	503	8615	-33	9085	1720	150	8	898	29	2805	6280	***6643***
Օգոստոս	326	8576	-27	8875	2208	149	4	763	2	3126	5749	***5911***
Սեպտեմբեր	1225	9376	-120	10481	2497	132	4	531	6	3171	7311	***7577***
Հոկտեմբեր	1225	9219	-103	10341	3469	133	22	738	4	4366	5975	***6352***
Նոյեմբեր	1225	8349	-88	9487	2840	134	11	1009	0	3994	5493	***5685***
Դեկտեմբեր	1444	8838	-92	10190	1739	142	6	0	36	1922	8268	***8478***
2002												
Հունվար	1164	7577	-51	8690	13895	142	6	0	8	14051	-5360	***-5100***
Փետրվար	958	7381	-37	8301	7562	141	6	0	9	7720	581	***747***

[1] Ներկայացված ցուցանիշները հաշվարկված են կանխիկ սկզբունքով հակառակ դեպքում առանձին ուշում է կատարված:

[2] Կառավարության նկատմամբ պահանջների և կառավարության ավանդների տարբերությունը:


[3] Հաշվարկված են կուտակման սկզբունքով:



ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ[1]

(մլն դրամ)

Ժամկետ	Առևտրային բանկերի պարտավորությունները Կառավարության նկատմամբ[2]	Կառավարության ավանդները ԿԲ-ում[3]	Ընդամենը
2001			
Հունվար	16018	4577	20595
Փետրվար	16470	6184	22653
Մարտ	16647	4506	21153
Ապրիլ	16893	2644	19536
Մայիս	17309	2962	20271
Հունիս	17273	3058	20331
Հուլիս	17481	2805	20285
Օգոստոս	18436	3126	21562
Սեպտեմբեր	19179	3171	22350
Հոկտեմբեր	19284	4366	23651
Նոյեմբեր	19309	3994	23303
Դեկտեմբեր	18314	1922	20236
2002			
Հունվար	18825	14051	32875
Փետրվար	18785	7720	26504



[1] Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ: Ներկայացված տվյալները հաշիվների մնացորդներն են ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

[2] Ընդգրկված են առևտրային բանկերի ցպահանջ և ժամկետային պարտավորությունները Գանձապետարանի նկատմամբ՝ բացառությամբ ՀՀ սոցապ. պետական հիմնադրամի նկատմամբ պարտավորությունների:

[3] Ընդգրկված են հանրապետական բյուջեի, ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի և ՕԻԳ-երի միջոցները:

ՓՈՂԻ ԲԱԶԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

(մլն դրամ)

	2000[2]	I եռ. 01[2]	II եռ. 01[2]	III եռ. 01[2]	IV եռ. 01[2]	IV եռ. 01[3]	Հ - 02[3]	Փ- 02[3]
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)								
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [1]	***74783***	***66005***	***66775***	***71845***	***81645***	***84908***	***91157***	***84532***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-2393***	***-4575***	***-71***	***-281***	***-1276***	***-4539***	***-19316***	***-11676***
Կառավարություն	8292	5201	5756	7311	8268	8268	-5360	581
Հանրապետ. կառավարություն	8294	5207	5757	7317	8304	8304	-5353	590
այդ թվում՝ ՕԻԳ-երի միջոցներ	-889	-1176	-711	-531	0	0	0	0
ՀՀ սոցապ. պետ. հիմնադրամ	-2	-6	-1	-6	-36	-36	-8	-9
Բանկեր	3332	2454	3794	4639	3855	3855	1920	3807
այդ թվում՝ ռեպո համաձայն.	0	429	1169	1414	0	0	0	0
ավանդներ (-)	0	0	0	0	-50	-50	-1680	-860
Զուտ այլ ակտիվներ	-14017	-12230	-9621	-12231	-13399	-16662	-15876	-16064
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [4]	***73097***	***62601***	***67214***	***72463***	***79939***	***79939***	***74045***	***74683***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***72390***	***61430***	***66704***	***71564***	***80369***	***80369***	***71841***	***72856***
ԿԲ-ից դուրս կանխիկ դրամ	61873	49020	53918	56759	66692	66692	58080	60305
Պարտադիր պահուստ. (դրամով)	10350	12229	12604	14634	13489	13489	13528	12295
Այլ հաշիվներ	167	181	182	171	188	188	233	256
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)								
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***22167***	***-8778***	***770***	***5070***	***9800***	***-***	***6249***	***-6625***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-3630***	***-2182***	***4504***	***-210***	***-995***	***-***	***-14777***	***7640***
Կառավարություն	-14	-3091	555	1555	957	-	-13628	5941
Հանրապետ. կառավարություն	-113	-3087	550	1560	987	-	-13657	5943
այդ թվում՝ ՕԻԳ-երի միջոցներ	-726	287	-465	-180	-531	-	0	0
ՀՀ սոցապ. պետ. հիմնադրամ	-99	4	-5	5	30	-	-28	1
Բանկեր	1980	-878	1340	845	-784	-	-1935	1887
այդ թվում՝ ռեպո համաձայն.	-399	429	740	245	-1414	-	0	0
ավանդներ (-)	-40	0	0	0	50	-	-1630	-820
Զուտ այլ ակտիվներ	-5596	1787	2609	-2610	-1168	-	786	-188
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [4]	***19125***	***-10496***	***4613***	***5249***	***7476***	***-***	***-5894***	***638***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***18537***	***-10960***	***5274***	***4860***	***8805***	***-***	***-8528***	***1015***
ԿԲ-ից դուրս կանխիկ դրամ	16391	-12853	4898	2841	9933	-	-8612	2225
Պարտադիր պահուստ. (դրամով)	2389	1879	375	2030	-1145	-	39	-1233
Այլ հաշիվներ	-243	14	1	-11	17	-	45	23
(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)								
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***42.1***	***-11.7***	***1.2***	***7.6***	***13.6***	***-***	***7.4***	***-7.3***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-293.5***	***-91.2***	***98.4***	***-295.8***	***-354.1***	***-***	***-325.6***	***39.6***
Կառավարություն	-0.2	-37.3	10.7	27.0	13.1	-	-164.8	110.8
Հանրապետ. կառավարություն	-1.3	-37.2	10.6	27.1	13.5	-	-164.5	111.0
այդ թվում՝ ՕԻԳ-երի միջոցներ	-45.0	32.3	-39.5	-25.3	-100.0	-	0	0
Բանկեր	146.4	-26.4	54.6	22.3	-16.9	-	-50.2	98.3
այդ թվում՝ ռեպո համաձայն.	-100.0	100.0	172.5	21.0	-100.0	-	0	0
ավանդներ (-)	-100.0	0	0	0	100.0	-	3260.0	-48.8
Զուտ այլ ակտիվներ	-66.5	12.7	21.3	-27.1	-9.5	-	4.7	-1.2
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [4]	***35.4***	***-14.4***	***7.4***	***7.8***	***10.3***	***-***	***-7.4***	***0.9***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***34.4***	***-15.1***	***8.6***	***7.3***	***12.3***	***-***	***-10.6***	***1.4***
ԿԲ-ից դուրս կանխիկ դրամ	36.0	-20.8	10.0	5.3	17.5	-	-12.9	3.8
Պարտադիր պահուստ. (դրամով)	30.0	18.2	3.1	16.1	-7.8	-	0.3	-9.1
Այլ հաշիվներ	-59.3	8.4	0.6	-6.0	9.9	-	23.9	9.9

[1] Առանց սեփականաշնորհման միջոցների: ԶԱՄ-ն ընդգրկում են փոխարկելի արտարժույթով ակտիվները:

[2] ԶԱՄ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքներով. 1 ԱՄՆ դոլար = 552.18 դրամ, 1 SDR = 1.3029 ԱՄՆ դոլար, 1 եվրո = 0.9305 ԱՄՆ դոլար, 1 ուսցիա ոսկի = 264.15 ԱՄՆ դոլար:

[3] ԶԱՄ-ն հաշվարկված են նոր ծրագրային փոխարժեքներով. 1 ԱՄՆ դոլար = 561.81 դրամ, 1 SDR = 1.2567 ԱՄՆ դոլար, 1 եվրո = 0.8904 ԱՄՆ դոլար, 1 ուսցիա ոսկի = 276.5 ԱՄՆ դոլար:

[4] Փողի բազան հաշվարկված է որպես տվյալ ամսվա վերջին օրվան նախորդող հինգ օրերի և հաջորդ ամսվա սկզբի հինգ օրերի միջինը:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵԿՇԻՌ[1]

Ցուցանիշներ	2001												2002	
	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ	Ն	Դ	Հ	Փ
ԶԱԱ (փոխարկելի արտարժույթով)	-13937	-13799	-10717	-10140	-7571	-9890	-8949	-8849	-9066	-6729	-8261	-8412	-1573	-1802
Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով	55606	52620	53021	53495	53404	46065	47383	50510	48340	55188	57580	55693	54721	55363
Արտաքին պարտավորություններ փոխարկելի արտարժույթով	-64861	-61855	-59257	-59465	-56447	-51339	-51697	-54632	-52533	-57058	-60834	-59040	-51090	-51992
Արտաքին պարտավորություններ դրամով	-4682	-4565	-4481	-4171	-4528	-4616	-4635	-4728	-4872	-4859	-5006	-5064	-5204	-5173
ԶՆԱ	109188	106711	108618	107632	105879	112773	112179	114041	114639	112749	116231	115415	108471	105332
Կառավարություն	571	449	355	-2807	-1616	-948	-1216	-50	-1637	-1467	-1142	105	2659	3044
Հանրապետական կառավարություն	646	531	484	-2616	-1425	-792	-1111	61	-1492	-1317	-1030	163	2771	3149
Տեղական կառավարման մարմիններ	-75	-82	-129	-191	-191	-156	-104	-111	-144	-150	-113	-58	-111	-105
Զուտ պահանջներ ԿԲ նկատմամբ	13348	9961	10586	10665	8819	8923	8672	7562	10051	8997	10755	9936	12489	9522
Պահուստային ակտիվներ	15861	12484	13891	14976	12100	13593	14168	12167	15600	14128	14938	14747	16952	15065
Պարտավորություններ ԿԲ նկատմամբ	-2513	-2523	-3306	-4311	-3281	-4670	-5496	-4605	-5548	-5131	-4183	-4812	-4463	-5543
Տնտեսություն	109275	107536	107578	109298	107523	108476	106771	107297	108277	111077	111153	102498	83134	84847
Ձեռնարկություններ	64564	63941	64533	64981	62290	63748	63462	64965	65831	67246	67147	62657	57614	58136
Դրամով	12577	12483	13349	13233	13555	13724	13174	13937	14319	14356	13498	19111	18354	17732
Արտարժույթով	51987	51458	51183	51748	48735	50024	50288	51028	51512	52889	53648	43546	39259	40404
Տնտեսության այլ հատվածներ	44711	43595	43045	44317	45233	44728	43309	42331	42446	43831	44006	39841	25521	26711
Դրամով	7350	7046	6440	6650	6742	6495	6164	5088	5499	5951	5611	5529	4002	4541
Արտարժույթով	38718	37906	37962	39018	39835	39586	38515	38639	38343	39279	39794	35711	22917	23569
Զուտ այլ ակտիվներ	-14006	-11235	-9901	-9524	-8847	-3678	-2048	-767	-2053	-5858	-4535	2876	10188	7919
Արտաքին ակտիվներ դրամով	303	287	230	176	173	134	134	139	138	138	126	127	125	168
Արտաքին ակտիվներ (ոչ փոխարկելի արտարժույթով)	824	1523	475	569	737	1112	841	477	495	594	1121	1434	1246	792
Արտաքին պարտավորություններ (ոչ փոխարկելի արտարժույթով)	-233	-737	-69	-226	-243	-428	-56	-49	-89	-87	-45	-477	-148	-30
Ստորադաս վարկեր	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
Միջբանկային պահանջներ[2]	13050	13091	12810	11013	11561	9861	9825	10106	9584	15016	13509	9010	6565	5894
Այլ ակտիվներ	30671	30705	29902	30069	32194	31627	32194	33407	32703	33853	33870	36569	36133	36998
Միջբանկային պարտավ.-ներ[3]	-13418	-13280	-12669	-11024	-11006	-9939	-10191	-10277	-10191	-14676	-13966	-10029	-7783	-6825
Դրամական շուկայի գործիքներ	0	0	0	0	0	0	0	0	0	-88	-89	-90	-91	-92
Ներդրումներ փայաբաժիններում	399	399	403	405	405	365	462	435	438	438	439	452	451	451
Ստորադաս պարտավորու-թյուններ ռեզիդենտներին	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
Կապիտալ հաշիվներ	-37175	-35402	-33828	-33897	-33765	-27534	-25522	-25179	-25104	-29780	-27706	-25382	-18017	-18816
Զուտ ներբանկային հաշիվներ	278	269	215	307	245	236	284	158	487	324	330	332	327	374
Այլ պարտավորություններ	-8766	-8167	-7442	-6980	-9201	-9163	-10070	-10036	-10571	-11648	-12164	-9105	-8622	-10995
ԱՎԱՆԴՆԵՐ	95252	92911	97901	97491	98308	102883	103231	105192	105573	106020	107970	107003	106898	103529
Դրամով	19018	18405	18199	19364	18451	19243	18906	17968	21092	19794	20705	20068	21088	21616
Ցպահանջ ավանդներ[4]	13098	12169	11991	12959	12115	12555	13169	11937	14725	13285	13878	13395	13276	13597
Ժամկետային ավանդներ	5920	6236	6208	6405	6336	6688	5736	6030	6367	6509	6827	6673	7812	8019
Ավանդներ արտարժույթով	76234	74506	79702	78128	79857	83640	84325	87224	84481	86227	87265	86935	85809	81913

[1] Բոլոր դասակարգումներն իրականացված են ԱՄՀ «Դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի» հատվածային հաշվեկշիռների կազմման սկզբունքներին համապատասխան. յուրաքանչյուր գործիք ընդգրկում է հաշվարկված տոկոսները: Բոլոր արտարժութային հաշիվները հաշվարկված են շուկայական փոխարժեքներով:

[2] Ներառված է ՀՀ առևտրային բանկերի՝ միմյանց նկատմամբ պահանջների հանրագումարը:

[3] Ներառված է ՀՀ առևտրային բանկերի՝ միմյանց նկատմամբ պարտավորությունների հանրագումարը:

[4] Ընդգրկում են ռեզիդենտների՝ դրամով հաշիվները և ցպահանջ ավանդները:

ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

(մլն դրամ)

	2000[2]	I եռ. 01[2]	II եռ. 01[2]	III եռ. 01[2]	IV եռ. 01[2]	IV եռ. 01[3]	Հ - 02[3]	Փ - 02[3]
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)								
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [1]	***60531***	***55288***	***56885***	***62799***	***73233***	***76496***	***89584***	***82730***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***91122***	***89698***	***98425***	***97251***	***98985***	***95722***	***73376***	***78824***
Կառավարություն	9301	5556	4808	5674	8372	8372	-2701	3625
Հանրապետական կառավարություն	9373	5691	4964	5825	8466	8466	-2582	3740
ՀՀ սոցապ. պետական հիմնադրամ	-2	-6	-1	-6	-36	-36	-8	-9
Տեղական կառավարման մարմիններ	-70	-129	-156	-144	-58	-58	-111	-105
Տնտեսություն	109319	107746	108638	108447	102669	102669	83303	85526
Չեռնարկ. և կազմակերպ.	63968	64680	63895	65978	62804	62804	57761	58796
որից՝ կուտակված տոկոսներ	2496	3113	4051	4551	2711	2711	2314	2357
Տնտեսության այլ ճյուղեր	45351	43066	44743	42469	39865	39865	25542	26730
որից՝ կուտակված տոկոսներ	2784	2082	2198	1707	196	196	720	680
Զուտ այլ ակտիվներ	-27498	-23604	-15021	-16870	-12056	-15319	-7226	-10327
ԴՐԱՄԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾ [4]	***76722***	***65057***	***71420***	***75235***	***85033***	***85033***	***76854***	***79307***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ *(առանց կուտ. տոկոս.)*	***150599***	***143831***	***154342***	***158728***	***171047***	***171047***	***161795***	***160393***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ [5]	***151653***	***144986***	***155310***	***160050***	***172218***	***172218***	***162960***	***161554***
Շրջանառությունում կանխիկ դրամ	59486	46905	52246	54305	65027	65027	55831	57768
Ցպահանջ ավանդներ[6]	11909	12164	12735	14894	13581	13581	13485	13826
որից՝ կուտակված տոկոսներ	138	191	191	249	193	193	208	212
Ժամկետ., խնայ. և արտարժ. ավանդ.	80259	85918	90330	90851	93609	93609	93645	89959
որից՝ կուտակված տոկոսներ	917	964	777	1073	978	978	957	949
այդ թվում՝ արտարժույթով ավանդներ	74774	79710	83642	84483	86936	86936	85832	81940
որից՝ կուտակված տոկոսներ	897	935	720	990	923	923	890	855
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)								
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***30235***	***-5243***	***1597***	***5914***	***10434***	***-***	***13088***	***-6854***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***11964***	***-1424***	***8727***	***-1174***	***1734***	***-***	***-22346***	***5448***
Կառավարություն	-6067	-3745	-748	866	2698	-	-11073	6326
Հանրապետական կառավարություն	-6510	-3682	-727	861	2641	-	-11048	6322
ՀՀ սոցապ. պետական հիմնադրամ	-310	4	-5	5	30	-	-28	1
Տեղական կառավարման մարմիններ	-133	59	27	-12	-86	-	53	-6
Տնտեսություն	19192	-1573	892	-191	-5778	-	-19366	2223
Չեռնարկ. և կազմակերպ.	12278	712	-785	2083	-3174	-	-5043	1035
որից՝ կուտակված տոկոսներ	22	617	938	500	-1840	-	-397	43
Տնտեսության այլ ճյուղեր	6914	-2285	1677	-2274	-2604	-	-14323	1188
որից՝ կուտակված տոկոսներ	236	-702	116	-491	-1511	-	524	-40
Զուտ այլ ակտիվներ	-1161	3894	8583	-1849	4814	-	8093	-3101
ԴՐԱՄԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾ [4]	***20434***	***-11665***	***6364***	***3815***	***9798***	***-***	***-8179***	***2453***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ *(առանց կուտ. տոկոս.)*	***42054***	***-6768***	***10511***	***4387***	***12319***	***-***	***-9252***	***-1402***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ [5]	***42199***	***-6667***	***10324***	***4740***	***12168***	***-***	***-9258***	***-1406***
Շրջանառությունում կանխիկ դրամ	16876	-12582	5342	2059	10722	-	-9196	1937
Ցպահանջ ավանդներ[6]	2292	255	571	2159	-1313	-	-96	341
որից՝ կուտակված տոկոսներ	12	53	0	58	-56	-	15	4
Ժամկետ., խնայ. և արտարժ. ավանդ.	23032	5659	4412	521	2758	-	36	-3686
որից՝ կուտակված տոկոսներ	134	47	-187	296	-95	-	-21	-8
այդ թվում՝ արտարժույթով ավանդներ	21750	4936	3932	841	2453	-	-1104	-3892
որից՝ կուտակված տոկոսներ	130	39	-216	270	-67	-	-33	-35
(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)								
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***99.8***	***-8.7***	***2.9***	***10.4***	***16.6***	***-***	***17.1***	***-7.7***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***15.1***	***-1.6***	***9.7***	***-1.2***	***1.8***	***-***	***-23.3***	***7.4***
Կառավարություն	-39.5	-40.3	-13.5	18.0	47.6	-	-132.3	234.2
Հանրապետական կառավարություն	-41.0	-39.3	-12.8	17.3	45.3	-	-130.5	244.8
Տեղական կառավարման մարմիններ	-65.5	84.3	20.9	-7.7	-59.7	-	91.4	-5.4
Տնտեսություն	21.3	-1.4	0.8	-0.2	-5.3	-	-18.9	2.7
Չեռնարկ. և կազմակերպ.	23.8	1.1	-1.2	3.3	-4.8	-	-8.0	1.8
Տնտեսության այլ ճյուղեր	18.0	-5.0	3.9	-5.1	-6.1	-	-35.9	4.7
Զուտ այլ ակտիվներ	-4.4	14.2	36.4	-12.3	28.5	-	52.8	-42.9
ԴՐԱՄԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾ [4]	***36.3***	***-15.2***	***9.8***	***5.3***	***13.0***	***-***	***-9.6***	***3.2***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ *(առանց կուտ. տոկոս.)*	***38.7***	***-4.5***	***7.3***	***2.8***	***7.8***	***-***	***-5.4***	***-0.9***

ՓՈՂԻ ՁԱՆԳՎԱԾ[5]	*38,6*	*-4,4*	*7,1*	*3,1*	*7,6*	*-*	*-5.4*	*-0.9*
Շրջանառությունում կանխիկ դրամ	39,6	-21,2	11,4	3,9	19,7	-	-14.1	3.5
Ցպահանջ ավանդներ[6]	23,8	2,1	4,7	17,0	-8,8	-	-0.7	2.5
ժամկետ., խնայ. և արտարժ. ավանդներ	40,2	7,1	5,1	0,6	3,0	-	0.04	-3.9
այդ թվում՝ արտարժույթով ավանդներ	41,0	6,6	4,9	1,0	2,9	-	-1.3	-4.5

[1] ՁԱՄ-ն ընդգրկում են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները: Կենտրոնական բանկի ՁԱՄ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքով, առևտրային բանկերի ՁԱՄ-ն փաստացի փոխարժեքով:

[2] Կենտրոնական բանկի ՁԱՄ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքներով՝ 1 ԱՄՆ դոլար = 552.18 դրամ, 1 SDR = 1.3029 ԱՄՆ դոլար, 1 եվրո = 0.9305 ԱՄՆ դոլար, 1 ունցիա ոսկի = 264.15 ԱՄՆ դոլար:

[3] Կենտրոնական բանկի ՁԱՄ-ն հաշվարկված են նոր ծրագրային փոխարժեքներով. 1 ԱՄՆ դոլար = 561.81 դրամ, 1 SDR = 1.2567 ԱՄՆ դոլար, 1 եվրո = 0.8904 ԱՄՆ դոլար, 1 ունցիա ոսկի = 276.5 ԱՄՆ դոլար:

[4] Ընդգրկում է կանխիկը շրջանառությունում, ռեզիդենտների՝ միայն դրամով ցպահանջ և ժամկետային ավանդները (առանց կուտակված տոկոսների):

[5] Ընդգրկում է կանխիկը շրջանառությունում, ռեզիդենտների՝ դրամով ցպահանջ և ժամկետային ավանդները, արտարժութային ավանդները (ներառյալ կուտակված տոկոսները):

[6] Ընդգրկում են ռեզիդենտների՝ դրամով հաշիվները և ցպահանջ ավանդները:

ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ[1]

(մլն դրամ)


ժամկետ	Շրջանառությունում կանխիկ դրամ	Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով	M1[2]	ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	M2[3]	Արտարժույթով ավանդներ	M2X[4]
2001							
Հունվար	48128	13071	61199	5902	67101	75716	142817
Փետրվար	47351	12150	59501	6214	65715	73573	139288
Մարտ	46905	11973	58877	6179	65057	78775	143831
Ապրիլ	48550	12885	61435	6373	67808	77261	145069
Մայիս	50564	12021	62585	6293	68878	78912	147790
Հունիս	52246	12543	64789	6631	71420	82922	154342
Հուլիս	53779	13123	66902	5674	72576	83517	156092
Օգոստոս	56394	11835	68229	5969	74198	86341	160539
Սեպտեմբեր	54305	14645	68950	6285	75235	83493	158728
Հոկտեմբեր	58799	13183	71982	6451	78433	85247	163680
Նոյեմբեր	59089	13793	72882	6762	79644	86244	165888
Դեկտեմբեր	65027	13388	78415	6618	85033	86013	171047
2002							
Հունվար	55831	13277	69108	7746	76854	84942	161795
Փետրվար	57768	13614	71382	7925	79307	81085	160393


[1] Ավանդների մեջ կուտակված տոկոսները չեն ընդգրկված:


[2] M1-ն ընդգրկում է շրջանառությունում կանխիկ դրամը և ցպահանջ ավանդները (ներառյալ հաշիվները):


[3] M2-ը դրամային զանգվածն է. ընդգրկում է M1-ը և դրամով ժամկետային ավանդները:


[4] M2X-ը փողի զանգվածն է. ընդգրկում է M2-ը և արտարժույթով ավանդները (ներառյալ հաշիվները):



Փողի բազան տատանումների թույլատրելի միջակայքում
2002 թ. հունվար-փետրվար ամիսներին
մլն դրամ
83000
81500
80000
78500
77000
75500
74000
72500
71000
69500
03.01.02
05.01.02
07.01.02
09.01.02
11.01.02
13.01.02
15.01.02
17.01.02
19.01.02
21.01.02
23.01.02
25.01.02
27.01.02
29.01.02
31.01.02
02.02.02
04.02.02
06.02.02
08.02.02
10.02.02
12.02.02
14.02.02
16.02.02
18.02.02
20.02.02
22.02.02
24.02.02
26.02.02
28.02.02
Փողի բազա
Ծրագիր
Ծրագիր՝ +2%
Ծրագիր՝ -2%



Փողի բազայի դինամիկան ըստ տարրերի
մլն դրամ
90000
75000
60000
45000
30000
15000
0
1999 Հ 00 Փ Մ Ա Մ Հ Հ Օ Ս Հ Ն Դ Հ 01 Փ Մ Ա Մ Հ Հ Օ Ս Հ Ն Դ Հ 02 Փ
Կանխիկ դրամ ԿԲ-ից դուրս
Պարտ. պահուստ. դրամով
Այլ հաշիվներ


Փողի զանգվածի կառուցվածքը
մլն դրամ
180000
160000
140000
120000
100000
80000
60000
40000
20000
0
1999 Հ 00 Փ Մ Ա Մ Հ Հ Օ Ս Հ Ն Դ Հ 01 Փ Մ Ա Մ Հ Հ Օ Ս Հ Ն Դ Հ 02 Փ
Շրջանառությունում կանխիկ դրամ
Ցպահանջ ավանդներ
Ժամկետային ավանդներ
Արտարժույթով ավանդներ


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը փողի զանգվածում
%
100
80
60
40
20
0
97
98
99
00
01
02


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը դրամային զանգվածում
%
100
80
60
40
20
0
97
98
99
00
01
02



Փողի բազայի ամսական փոփոխությունը և ամսական սղաճը
%
20
15
10
5
0
-5
-10
-15
99
00
01
02
Փողի բազա
Սղաճ


Փողի զանգվածի ամսական փոփոխությունը և ամսական սղաճը
%
12
10
8
6
4
2
0
-2
-4
-6
-8
99
00
01
02
Փողի զանգված
Սղաճ

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ՋՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ[1]

(մլն դրամ)

Ցուցանիշներ	2001												2002	
	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ	Ն	Դ	Հ	Փ
Կենտրոնական բանկի ՁԱԱ	71340	70143	66005	64969	64237	66775	68381	71415	71845	76010	79491	84908	91157	84532
Առևտրային բանկերի ՁԱԱ	-13937	-13799	-10717	-10140	-7571	-9890	-8949	-8849	-9046	-6729	-8261	-8412	-1573	-1802
Ընդամենը	57403	56344	55288	54829	56666	56885	59432	62566	62799	69281	71230	76496	89584	82730
Կենտրոնական բանկի ՁԱՄ[2]	***72208***	***71139***	***66839***	***65985***	***65291***	***67855***	***69410***	***72376***	***72525***	***76632***	***80217***	***85782***	***91853***	***85194***



[1] ՁԱԱ-ն ընդգրկում են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները: Կենտրոնական բանկի ՁԱԱ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքով, առևտրային բանկերի ՁԱԱ-ն փաստացի փոխարժեքով: Աղյուսակում ներկայացված ցուցանիշները հաշվարկված են կանխիկ սկզբունքով, հակառակ դեպքում առանձին նշում է կատարված:

[2] Հաշվարկված են կուտակման սկզբունքով:

ՍԵԶՈՆԱՅՆՈՐԵՆ ՀԱՐԹԵՑՎԱԾ ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ*

(մլն դրամ)


Ժամկետ	Փողի բազա	Շրջանառությունում կանխիկ դրամ	M1	M2	M2X
2001					
Հունվար	66343	48434	61476	67749	143077
Փետրվար	63891	50685	64157	70133	144845
Մարտ	64528	49726	63338	69106	147612
Ապրիլ	67921	51707	65354	71412	151914
Մայիս	65698	53559	65853	71737	154371
Հունիս	69798	54866	67805	74185	159474
Հուլիս	67949	52911	65195	70924	153814
Օգոստոս	68107	55146	64900	71086	154338
Սեպտեմբեր	68602	52113	64730	71469	154042
Հոկտեմբեր	71740	57666	70530	77117	162655
Նոյեմբեր	72366	57700	70673	77499	162491
Դեկտեմբեր	72931	55636	70831	77709	162555
2002					
Հունվար	73620	56186	69421	77596	162462
Փետրվար	77033	61836	76968	84639	167175

** Փողի ագրեգատները ներկայացված են սեզոնայնությունից զտված տեսքով:*


Հարթեցման մեթոդիկան նկարագրված է «ՀՀ կենտրոնական բանկի բանբերի» 2001 թ. 2-րդ եռամսյակի համարում հրապարակված «ՀՀ փողի ագրեգատների թվային շարքերի հարթեցումներ» նյութում:

Ընդ որում, յուրաքանչյուր տարի փողի ագրեգատների հարթեցված շարքերը վերանայվում են, քանի որ նոր տվյալների ի հայտ գալուն զուգահեռ համապատասխան ամիսների սեզոնայնության գործակիցները փոխվում են: Այդ իսկ պատճառով «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի յուրաքանչյուր տարվա առաջին համարում հրապարակվում են փողի ագրեգատների հարթեցված նոր շարքերը:


Փողի բազայի փաստացի և հարթեցված մակարդակները




Բանկային համակարգից դուրս կանխիկ դրամի փաստացի և հարթեցված մակարդակներ



Դրամային զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները



Փողի զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ[1]

(մլն ԱՄՆ դոլար)

Անվանումը	2000[3]	2001				2002	
		I եռ.	II եռ.	III եռ.	IV եռ.[4]	Հ	Փ
Համախառն միջազգային պահուստներ *(առանց սեփականաշն. միջոցների)*	314.1	293.7	304.9	316.8	329.3	337.2	324.0
Համախառն միջազգային պահուստներ	330.5	324.0	312.7	324.0	332.9	340.8	327.6
այդ թվում՝							
Մոնետար ոսկի	12.2	11.6	12.1	13.1	12.4	12.6	13.2
SDR ԱՄՀ-ում	21.5	19.8	16.6	12.5	10.2	8.4	6.1
Արտարժույթ[2]	296.8	292.6	283.9	298.3	310.3	319.8	308.3
Համախառն միջազգային պահուստներ *(առանց սեփականաշն. միջոցների)*[5]	***316.1***	***295.5***	***306.9***	***318.4***	***331.0***	***338.6***	***325.3***


[1] Հաշվարկված են փաստացի փոխարժեքներով: Աղյուսակում ներկայացված ցուցանիշները հաշվարկված են կանխիկ սկզբունքով, հակառակ դեպքում առանձին նշում է կատարված:

[2] Ընդգրկված են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները:

[3] Ներառված չեն ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները: ԱՄՀ-ում SDR-ով միջոցները հաշվարկված են հիմք ընդունելով 2000 թ. դեկտեմբերի 31-ին ԱՄՀ կողմից սահմանված 1 SDR=1.3029 ԱՄՆ դոլար փոխարժեքը, որը տարբերվում է այդ օրվա դրությամբ ԿԲ կողմից սահմանված փոխարժեքից: Ոսկին հաշվարկված է փոփոխված գնով: Այս պատճառներով դեկտեմբերի համախառն միջազգային պահուստների ցուցանիշները տարբերվում են ՀՀ ԿԲ նախկին հրապարակումների համապատասխան ցուցանիշներից:

[4] ԱՄՀ-ում SDR-ով միջոցները հաշվարկված են հիմք ընդունելով 2001 թ. դեկտեմբերի 31-ին ԱՄՀ կողմից սահմանված 1 SDR = 1.2567 ԱՄՆ դոլար փոխարժեքը, որը տարբերվում է այդ օրվա դրությամբ ԿԲ կողմից սահմանված փոխարժեքից: Այդ պատճառով դեկտեմբերի համախառն միջազգային պահուստները տարբերվում են 2001 թ. դեկտեմբերի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» պարբերականում հրապարակված համապատասխան ցուցանիշներից:

[5] Հաշվարկված են կուտակման սկզբունքով:



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԸ[1]

Ցուցանիշներ	2000[4]	2001												2002	
	Դ	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ	Ն	Դ	Հ	Փ
Վարկեր[2]															
Իրավաբանական անձանց															
ՀՀ դրամով	28.1	33.9	35.1	22.0	37.4	34.8	30.5	33.2	29.4	25.6	27.6	30.0	27.5	23.4	20.0
ԱՄՆ դոլարով	31.8	26.1	25.7	27.0	29.4	27.3	22.1	24.8	25.9	26.3	21.2	19.0	20.3	28.6	20.7
Ֆիզիկական անձանց															
ՀՀ դրամով	36.8	27.6	36.4	31.7	24.3	24.2	29.6	31.9	32.6	29.6	34.1	26.1	30.2	29.8	29.3
ԱՄՆ դոլարով	39.3	38.8	35.4	35.1	33.5	33.6	35.0	33.0	34.7	36.8	36.4	35.3	35.5	37.1	34.0
Ավանդներ[2]															
Իրավաբանական անձանցից															
ՀՀ դրամով	19.3	21.9	22.0	21.5	14.1	17.4	15.1	23.4	11.8	18.0	13.6	16.8	15.0	10.0	12.0
ԱՄՆ դոլարով	12.6	5.8	15.8	12.6	12.6	12.9	13.4	10.5	11.9	8.1	6.7	13.2	9.7	4.0	14.0
Ֆիզիկական անձանցից															
ՀՀ դրամով	19.1	20.8	22.2	20.1	21.8	22.4	22.6	20.6	19.3	19.5	17.2	19.4	14.6	11.9	9.8
ԱՄՆ դոլարով	15.9	11.2	13.4	13.7	13.4	12.8	12.5	11.2	11.8	11.9	10.2	11.6	10.8	9.3	7.1
ԿԲ ռեպո գործառնությունների տոկոսադրույքը	25.0	25.0	25.0	23.0	21.0	21.0	16.0	16.0	15.0	15.0	15.0	15.0	15.0	14.0	13.5
ԿԲ-ում ՀՀ բանկերի ավանդների տոկոսադրույքը	8.0	8.0	8.0	8.0	8.0	8.0	8.0	8.0	8.0	8.0	8.0	8.0	8.0	8.0	6.0
ԿԲ լոմբարդային վարկերի տոկոսադրույքը	45.0	45.0	45.0	45.0	44.0	44.0	40.0	40.0	35.0	35.0	35.0	35.0	30.0	30.0	28.0
Պետական պարտատոմսերի եկամտաբերությունը[3]	27.7	25.9	23.8	25.1	24.6	21.0	20.0	18.5	18.0	19.0	17.5	16.8	16.4	14.3	13.8
Սղաճ	0.4	4.6	-0.9	0.02	-0.1	1.6	-1.3	-2.7	-0.7	-1.2	0.1	1.2	2.4	2.2	-0.7

[1] Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:


[2] Ներկայացված են 90-օրյա վարկերի և ավանդների միջին կշռված տոկոսադրույքները: 2001 թ. հունիս ամսվա իրավաբանական անձանց արտարժույթով ավանդների և նոյեմբեր ամսվա իրավաբանական անձանց դրամով և արտարժույթով ավանդների համար ներկայացված են 180-օրյա միջին կշռված տոկոսադրույքները:

[3] Ներկայացված է 9-12-ամսյա պարտատոմսերի միջին կշռված եկամտաբերությունը: 2000 թ. դեկտեմբեր և 2001 թ. հունվար-փետրվար ամիսների համար ներկայացված է 6-9-ամսյա պարտատոմսերի (ներառյալ 2001 թ. փետրվարի 175-օրյա պարտատոմսերը) միջին կշռված եկամտաբերությունը: Այս ցուցանիշները տարբերվում են ՀՀ ԿԲ նախկին հրապարակումների ցուցանիշներից, քանզի այս բաժնում նախկինում ներկայացվել է տարբեր ժամկետայնության պարտատոմսերի եկամտաբերությունը:

[4] Ներկայացված են վերջին ամիսների տոկոսադրույքները: Սղաճը ներկայացված է նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ:

ՀՀ ԴՐԱՄ / ԱՄՆ ԴՈԼԱՐ ՓՈԽԱՐԺԵՔԸ

Ամսաթիվ	Հ-01	Օ-01	Ս-01	Հ-01	Ն-01	Դ-01	Հ-02	Փ-02
1	-	553.67	-	554.14	563.14	-	-	563.99
2	554.63	553.36	-	554.14	563.14	-	-	-
3	554.21	553.49	554.59	555.58	-	566.51	561.81	-
4	555.05	-	553.60	555.58	-	566.51	561.81	563.84
5	-	-	554.06	558.44	563.14	566.51	-	563.18
6	554.12	553.49	553.95	-	563.14	566.51	-	563.28
7	-	552.89	554.23	-	563.67	566.51	562.15	564.21
8	-	552.89	-	558.44	563.67	-	562.55	564.09
9	554.59	552.89	-	558.44	563.67	-	563.01	-
10	554.52	554.00	553.66	558.44	-	566.20	563.70	-
11	553.46	-	554.42	559.90	-	565.85	564.15	564.25
12	553.40	-	554.77	559.97	563.67	564.94	-	564.05
13	553.58	554.00	554.77	-	564.38	564.76	-	564.42
14	-	554.00	553.89	-	564.52	564.45	564.60	565.00
15	-	554.00	-	561.57	564.68	-	565.06	565.53
16	553.44	554.30	-	561.73	564.32	-	565.48	-
17	553.51	554.30	553.81	563.46	-	564.86	565.48	-
18	553.51	-	553.92	564.31	-	564.86	565.98	565.53
19	554.32	-	553.32	564.80	564.65	564.86	-	565.27
20	554.45	554.87	553.93	-	564.73	564.86	-	565.84
21	-	556.00	-	-	565.17	564.86	565.16	565.84
22	-	556.50	553.93	563.11	565.55	-	564.86	566.86
